ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԱՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Նանե Շահբազյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական ն պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի հուլիսի 21-ից հոկտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակման աշխատանքներին, որի շրջանակներում մասնակցել եմ մի շարք աշխատանքային քննարկումների, դրանց շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

   1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի օրենքի նախագիծ,
   2) «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և չափորոշիչները» նախարարի հրամանի նախագիծ,
   3) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,
   4) ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ:

2. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

3. Ուսումնասիրել եմ քրեական և քրեադատավարական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ միջազգային փորձ և դատական պրակտիկա և ըստ այդմ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ:

4. Կազմել եմ Ազգային ժողովից, Վարչապետի աշխատակազմից, այլ պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից, դատապարտյալներից և կալանավորված անձանցից ստացված ընթացիկ դիմումների, գրությունների, հարցումների և հաշվետվությունների վերաբերյալ պատասխանների նախագծեր:

Հարգանքով՝ Նանե Շահբազյան

21.10.2025թ.